ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՅՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ՍԱՄՎԵԼԻ

ԱՇԽԱՐՀԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՊԱՀՊԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Է.00.03 - «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝
պ.գ.թ. Գագիկ Գվիդոնի Սարգսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
պ.գ.դ. Ամատունի Սասունիկի Վիրաբյան
պ.գ.թ. Դիաննա Հրաչյայի Միրիջանյան

Առաջատար կազմակերպություն՝
Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ. հունիսի 11-ին, ժամը 14:00-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի 007 «Հնագիտության և ազգագրության» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0025, ք. Երևան, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. մայիսի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պ.գ.թ. Արսեն Էդուարդի Հարությունյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է նշանավոր գիտնական, հայագետ Աշխարհբեկ Քալանթարի հուշարձանապահպան գործունեության լուսաբանմանը:

Թեմայի արդիականությունը: Հայ ժողովուրդն իր դարավոր պատմության ընթացքում ստեղծել է հարուստ մշակութային ժառանգություն, որի անբաժան մասն են պատմական հուշարձանները: Դրանք սփռված են Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքում ու գաղթավայրերում: Գաղտնիք չէ, որ Հայաստանը համարվում է թանգարան բաց երկրնքի տակ և այս գնահատականին հայ ժողովուրդը հասել է այն մարդկանց շնորհիվ, որոնք իրենց ողջ գիտակցական կյանքն անմնացորդ նվիրաբերել են մշակութային ժառանգության պահպանության և ուսումնասիրության գործին: Ուստի յուրաքանչյուր ժողովրդի և պետության առաջնահերթ խնդիրներից է իր նախնիների կողմից ստեղծված պատմամշակութային ժառանգության պահպանությունը:

Ընդսմին հուշարձանապահանության մեծ նվիրյալ Աշխարհբեկ Քալանթարի գործունեության անդրադարձով փորձել ենք ցույց տալ, որ յուրաքանչյուր դարաշրջանում և ժամանակահատվածում, երբ դրվում է այս կամ այն ճարտարապետական կառույցի պահպանության նպատակահարմարությունը, հարկ է խնդրին վերաբերվել ամենայն պատասխանատվությամբ, հաշվի առնել գործին քաջատեղյակ մասնագետներիի կարծիքը: Այս տեսակետից, Աշխարհբեկ Քալանթարի հուշարձանապահպան գործունեության լուսաբանումը կարող է օգտակար լինել ներկայումս ընթացող քաղաքաշինական գործընթացներում: Կարծում ենք նաև, որ այն ավանդույթներն ու գործելաոճը, որոնք ներդրվեցին Հայաստանի առաջին Հանրապետության և հատկապես Խորհրդային իշխանության տարիներին հուշարձանապահպանության գործում, անշուշտ, ուսանելի են ներկա ժամանակների համար:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ներկա աշխատանքի նպատակն է լուսաբանել և քննության առնել հուշարձանապահպանության գործի նվիրյալ Աշխարհբեկ Լոռու Մելիք-Քալանթարի գործունեությունը, ընդգծել նրա ներդրումը մշակութային ժառանգության պահպանության խնդրում: Ելնելով այդ հիմնարար դրույթից՝ մեր առջև խնդիր ենք դրել արխիվային նյութերի, փաստաթղթերի ժողովածուների, մամուլի հրապարակումների ու լույս տեսած պատմագիտական գրականության համակողմանի քննությամբ՝ հիմնահարցը դիտարկել հետևյալ տեսանկյուններից՝

- Ուսումնասիրել Հայաստանի ազգային արխիվում պահվող և հիմնահարցի լուսաբանմանը միտված փաստաթղթերը:
- Բացահայտել Խորհրդային իշխանության օրոք Հայաստանի հնությունների պահպանության գործում առկա հիմնախնդիրները, դժվարություններն ու առանձնահատկությունները:

- Աշխ. Քալանթարի գործունեության օրինակով քննարկել հնությունների պահպանության գործընթացը Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների տարիներին, ընդգծել դրականն ու ուսանելին:
- Վեր հանել հուշարձանների պահպանության գործընթացում Խորհրդային իշխանության տարիներին թույլ տրված սխալներն ու թերացումները, ցույց տալ դրանց բացասական հետևանքները պատմամշակութային ժառանգության պահպանության խնդրում:
- Լուսաբանել հուշարձանապահպանության գործում եղած դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիներն ու միջոցները, բնութագրել Խորհրդային իշխանության տարիներին հուշարձանապահպանության կայացման փուլերը:

Ատենախոսության գիտական նորույթը և գործնական նշանակությունը: Առաջին անգամ փորձ է կատարվում գիտական շարադրանքով ներկայացնել Աշխարբեկ Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը, ուստի հաշվի առնելով հիմնահարցի գիտաճանաչողական և գործնական նշանակությունը՝ ատենախոսության մեջ քննության են առնվել ոչ միայն Աշխ. Քալանթարի հուշարձանապահպան գործունեության հիմնական փուլերը, այլև բնութագրվել և վերլուծության է ենթարկվել Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների գոյության տարիներին հնությունների պահպանության գործընթացը՝ իր ձեռքբերումներով ու բացասական հետևանքներով: Այլ խոսքով՝ մեծանուն գիտնականի հուշարձանապահպան գործունեության լուսաբանումը դիտարկվել է տվյալ ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և քաղաքական իրադարձությունների համատեքստում:

Ատենախոսությունը կարող է օգտակար լինել հնագիտության՝ սկսած հին, միջին և նոր շրջանի հիմնախնդիրներով զբաղվողների, մասնավորապես՝ Հայաստանի հնությունների և հուշարձանների պահպանության պատմության հարցերով հետաքրքրվողների համար: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել նաև ուսումնական ձեռնարկների, հուշարձանապահպանության հիմնախնդիրներին նվիրված ժողովածուների, բուհական ու դպրոցական դասագրքերի կազմման ժամանակ, ինչպես նաև «Հնագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում:

Աշխատանքի աղբյուրագիտական հենքը*:* Ներկա հետազոտության համար առաջին հերթին ***աղբյուրագիտական հիմք*** են ծառայել Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) փաստաթղթերը: Ուսումնասիրության ընթացքում հիմնականում առանձնացվել են արխիվի հետևյալ բովանդակության փաստաթղթերն ու վավերագրերը.

- ՀՀ պետական մարմինների՝ Հայաստանի առաջին հանրապետության և այնուհետև Խորհրդային կառավարության, տեղական իշխանությունների որոշումներն ու հրամանները, շրջաբերականները, հրահանգներն ու հանձնարարականները, որոնք բնութագրում և լուսաբանում են հնությունների պահպանության գործընթացները:

- ՀՀ կառավարության զեկուցագրերն ու հաշվետվությունները, որոնք կարևոր աղբյուրագիտական նյութ են պարունակում Հայաստանում հուշարձանապահպանության ուղղությամբ վարած քաղաքականության և տեղերում իրականացված միջոցառումների մասին:

- Առանձնակի քննության է առնվել հուշարձանապահպանության պետական լիազոր մարմնի և կառավարման կենտրոնական և տեղական մարմինների համագործակցությունը: Այդ տեսակետից մեր ուսումնասիրության համար կարևոր աղբյուր են ծառայել Հայաստանի կենտրոնական գործադիր կոմիտեի (կենտգործկոմի՝ ֆ. 112) ՀՀ կառավարության (ֆ. 113) և ՀՀ լուսժողկոմատի (ֆ. 122) ֆոնդերը, որոնցում արժեքավոր տեղեկություններ կան հուշարձանների պահպանության, տեղերում իրականացված հնագիտական արշավախմբերի և հնությունների պահպանության կոմիտեի հետ ունեցած համագործակցության մասին:

- Մեծապես կարևորվել և շարադրանքում օգտագործվել են Հայաստան այցելած և հուշարձանապահպանության գործընթացներին անմիջական մասնակցություն ունեցած հայ և օտարազգի գիտնականների զեկուցագրերն ու հուշերը. հատկապես կարևոր են պատմամշակութային արժեք ներկայացնող առանձին հուշարձանների պահպանության վերաբերյալ վերջիններիս հայտնած կարծիքները, որոնք երբեմն հակադիր են եղել կենտրոնական և տեղական իշխանությունների որդեգրած քաղաքականությանը:

- Որպես աղբյուրագիտական նյութ՝ լայնորեն օգտագործվել է փաստագրական և վիճակագրական բնույթի տեղեկությունները, որոնցից կարելի է հստակ պատկերացում կազմել քննարկող ժամանակաշրջանում Հայաստանում հուշարձանապահպանության ուղղությամբ իրականացվող միջոցառումների և այդ գործի անխոնջ նվիրյալ Աշխարհիբեկ Քալանթարի՝ այդ գործում ունեցած մեծ և կարևոր դերակատարության մասին:

Աղբյուրագիտական կարևոր տեղեկատվություններ ենք քաղել Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արխիվի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղում, որտեղ մեզ հաջողվեց հայթայթել Աշխ. Քալանթարի՝ Սանկտ Պետերբուրգում աշխատած տարիների, նշանավոր գիտնական Նիկողայոս Մառի հետ ունեցած նամակագրական կապերի մասին բազում փաստաթղթեր, որոնք գիտական առումով լուրջ հետաքրքրություն են ներկայացնում:

Թեմայի լուսաբանման համար, անշուշտ, պատմագիտական կարևոր արժեք են ներկայացնում քննության առարկա ժամանակահատվածում հրապարակված կառավարության դեկրետները, որոնցում առաջադրված են ինչպես Հայաստանի առաջին Հանրապետության, այնպես էլ Խորհրդային Հայաստանի հուշարձանների պահպանության հիմնական սկզբունքները, աշխատանքի բնագավառները, նպատակներն ու խնդիրները:

Ատենախոսության շարադրմանը նպաստ բերեցին նաև արխիվային և վիճակագրական բնույթի ժողովածուները, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում հանրապետության շրջաններում ընթացող հնագիտական աշխատանքների և հուշարձանների պահպանության վերաբերյալ:

Ատենախոսության համար աղբյուրագիտական կարևորություն են ներկայացնում նաև ժամանակի պարբերական մամուլը, ամենատարբեր բնույթի ժողովածուները, որոնցում արժեքավոր տեղեկություններ կան հանրապետության շրջաններում ընթացող հնագիտական աշխատանքների, այդ թվում և՝ հուշարձանների պահպանության մասին: Այդ տեսակետից հատկապես արժեքավոր են «Հորիզոն», «Հառաջ» և «Խորհրդային Հայաստան» թերթերի հաղորդած տեղեկությունները:

Ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն նաև պատմագիտական աշխատությունները, որոնցում առկա նյութերը հնարավորություն են տալիս հստակ պատկերացում կազմել ինչպես 20-րդ դարասկզբի, այնպես էլ Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների ժամանակաշրջանում կատարված պատմական իրադարձությունների և հատկապես կրթամշակութային կյանքի մասին:

Եվ, իհարկե, ներկա ատենախոսության համար կարևոր և արժեքավոր տեղեկություններ են պարունակում Աշխ. Քալանթարի հեղինակությամբ տպագրված աշխատություններն ու հոդվածները, որոնք լրացնում և ամբողջացնում են անվանի գիտնականի հուշարձանապահպան գործունեությունը: Պատմագիտական բնույթի առանձին հարցերի քննության ընթացքում, որոնք լրացուցիչ պարզաբանում են պահանջել, բնականաբար, անդրադարձ է կատարվել տվյալ հարցի մասին պատմագիտության մեջ շրջանառված կարծիքներին, հղումներ ենք կատարել ատենախոսությունում ներկայացված վավերագրերի հավաստիությունը հաստատող աշխատություններից, աղբյուրագիտական ժողովածուներից ու հոդվածներից:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Ատենախոսությունը գրվել է պատմահամեմատական և գիտական վերլուծության մեթոդաբանությամբ: Սկզբնաղբյուրների, արխիվային վավերագրերի և ուսումնասիրությունների նկատմամբ ցուցաբերվել է քննական մոտեցում, համեմատվել և վերլուծության են ենթարկվել տարաբնույթ փաստեր և տեսակետներ:

Ատենախոսության փորձաքննությունը և հրապարակումները: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի կողմից: Հիմնական հարցադրումներն ու դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի հրատարակած 6 հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթաբաժիններով, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, ինչպես նաև հավելվածից, որտեղ ներկայացված են թեմայի ուսումնասիրության հետ անմիջակորեն առնչվող արխիվային փաստաթղթերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, հիմնահարցի ուսումնասիրվածության աղբյուրագիտական հենքն ու գիտական նորույթը, նշված են հետազոտության նպատակն ու խնդիրները, մեթոդաբանությունը, գործնական նշանակությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՇԽԱՐՀԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

1.1 Աշխ. Քալանթարի մասնագիտական գործունեության առաջին քայլերը (1912-1918 թթ.): Ենթագլուխը նվիրված է 1912-1918 թթ. Աշխ. Քալանթարի ծավալած մասնագիտական գործունեության քննությանը: 1905 թ. ավարտելով Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ապա 1907 թ. Թիֆլիսի արական գիմնազիան, Աշխ. Քալանթարը նույն թվականին ընդունվեց Սանկտ Պետերբուրգի համալսարանի պատմալեզվաբանական բաժինը, որն ավարտեց գերազանցությամբ՝ 1911 թ.: Սանկտ Պետերբուրգում նա աշակերտեց հայագիտության երախտավոր Նիկողայոս Մառին: Ուսանելու տարիներին էլ 1907 թ Աշխ. Քալանթարը ներգրավվեց Անիում պեղումներ կատարող արշավախմբի կազմում: Այդ նույն թվականին նա հրատարակում է իր առաջին հոդվածը՝ նվիրված Անիի պեղումներին: Ն. Մառի և Աշխ. Քալանթարի համագործակցությունը բավականին արդյունավետ եղավ ոչ միայն հայրենի գիտության զարգացման տեսակետից, այլև հենց իր՝ Աշխ. Քալանթարի՝ որպես գիտնականի կայացման առումով: Աշխ. Քալանթարը մինչև իր կյանքի վերջը շնորհապարտ եղավ Նիկողայոս Մառին, ինչն իր արտացոլումն է գտել Քալանթարի բազում նամակներում: Դրանք ոչ միայն բնորոշում են նրանց անձնական փոխհարաբերությունները, այլև գիտական մեծարժեք տեղեկություններ են հաղորդում:

Այդ ընթացքում գիտելիքների հարստացման նպատակով Աշխ. Քալանթարը մեկնում է Արևելյան Պրուսիա՝ մասնակցելու Քյոնիգսբերգի (ներկայիս Կալինինգրադ) համալսարանում կազմակերպվող դասընթացներին: Հետզհետե Աշխ. Քալանթարին սկսում են նկատել գիտական շրջանակներում. Երիտասարդ և խոստումնալից գիտնականին աշխատանքի ընդունելու պատրաստակամություն է հայտնում Ռուսաստանի Կայսերական ակադեմիայի գիտական գրադարանը: Ն. Մառի երաշխավորությամբ էլ Աշխ. Քալանթարը հաստատվում է Գիտությունների ակադեմիայի Ասիական թանգարանի կրտսեր գիտական ավանդապահի հաստիքում, թեպետ ակնհայտ էր և այն, որ Աշխ. Քալանթարի գիտական համբավը գնալով լայն տարածում էր գտնում:

Աշխ. Քալանթարի մասնագիտական և կազմակերպչական որակներն առավել տպավորիչ էին 1912-1913 թթ. Իմիրզեկ հնավայրի պեղումների ժամանակ: 1913 թ. ամռանը Աշխ. Քալանթարը Կայսերական ակադեմիայի կող-

մից այս անգամ գործուղվում է Լոռու գավառ: Այստեղ նա զբաղվում է տեղի հնավայրերի հետազոտական և հավաքչական աշխատանքներով. լինում է Օձունում, Հոռոմայրում, Քոբայրավանքում և Դսեղի Սուրբ Գրիգոր Բարձրաքաշ վանքում: Աշխ. Քալանթարի հնագիտական գործունեության կարևոր փուլերից էր Շիրակավանի պեղումները:

1917 թ. շարունակվում է Աշխ. Քալանթարի գիտական գործունեությունը՝ այս անգամ արդեն Վանի հնագիտական երկրորդ արշավախմբի կազմում ուսումնասիրում է ուրարտական սեպագիր արձանագրությունները:

1.2 Աշխ. Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին: 1918 թ. մայիսի 28-ին Թիֆլիսում գործող Հայոց ազգային խորհուրդն ազդարարեց Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի մասին: ՀՀ նախարարների խորհրդի 1919 թ. հունիսի 10-ի նիստում հանրային կրթության նախարարությունը վերակազմավորվում է կրթության և արվեստի նախարարության: Նորաստեղծ նախարարությունն իր գործառութային կարևոր ուղղությունն է դարձնում Հանրապետության տարածքում գտնվող հնագիտական հուշարձանների և հնավայրերի պահպանության գործը: Որոշ ժամանակ անց, 1919 թ. հուլիսի 1-ին կազմավորվում է Հանրային կրթության և արվեստի նախարարությունը, որի կազմում ստեղծվում է հնությունների պահպանության բաժինը, իսկ վարիչ է նշանակվում Աշխարհբեկ Քալանթարը:

Աշխ. Քալանթարի ընտրությունը բնավ պատահական չէր. նա արդեն կայացած հեղինակություն էր հնությունների պահպանության ոլորտում, որի անմիջական ջանքերի շնորհիվ հնարավոր է դառնում բնագավառի կարևորագույն խնդիրների կանոնակարգումը:

Հնությունների պահպանության բաժինն իր գործունեությունը շարունակեց մինչև 1920 թ. կեսերը, երբ գործառույթները հանձնվեցին արդեն նոր կազմակերպված Հնությունների պետական պահպանության կոմիտեին: 1920 թ. հուլիսի 7-ին Հայաստանի ազգային ժողովը հաստատում է Հայաստանի հնությունների պետական պահպանության կոմիտե կազմակերպելու մասին օրենքը:

Ստանալով օրենքով սահմանված լիազորությունները, նախաձեռնող խումբը Աշխ. Քալանթարի գլխավորությամբ անմիջապես ձեռնամուխ է լինում հնագիտական արշավախմբերի աշխատանքների կազմակերպմանը, հստակեցվում են արշավախմբերի անդամների պարտականություններն ու նրանց առջև դրված խնդիրները:

Ծրագրված աշխատանքների կատարումը դյուրացնելու նպատակով Հայաստանի տարածքը բաժանվեց պատմահնագիտական տասը շրջանների, որոնցից կարևորագույն համարվող հինգ շրջանում աշխատանքները պետք է սկսվեին արդեն 1920 թվականին, քանի որ այդ շրջաններում կային հնագիտական նշանակության որմնանկարներ, որոնք նորոգման կարիք ունեին:

Ահա այսպիսի ծանր ճակատագիր էր վիճակված հնությունների պահպանության գործին Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին, ուստի նման պայմաններում խոսել հնությունների պահպանության գործի իրական առաջընթացի կամ զարգացման մասին, թերևս, անիմաստ է: Կարծում ենք, որ այս պատճառով է բացատրվում նաև այն իրողությունը, որ 1918-1920 թթ. հնությունների պահպանության մասին վկայող վավերագրերն այդքան սակավ են Հայաստանի ազգային արխիվում: Ավելին, Հայաստանի համար բավականին աննպաստ Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերից հետո, պատմական Անի մայրաքաղաքի հնագիտական ողջ ժառանգությունը բաժին հասավ Քեմալական Թուրքիային:

Այդուհանդերձ, Աշխ. Քալանթարն իր ուժերի ներածին չափով փորձել է ոչ միայն նպաստել հայրենական գիտության զարգացմանը, այլև առաջ տանել իրեն համար նվիրական դարձած Հայաստանի հնագիտական ժառանգության պահպանության գործը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՇԽԱՐՀԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՊԱՀՊԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

2.1 Աշխ. Քալանթարի դերը հուշարձանապահպանության կազմակերպման գործում (1921-1925 թթ.): Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերի և հրապարակված պատմագիտական աշխատությունների հիման վրա ներկայացվում և մանրամասն քննության են առնվում Խորհրդային իշխանության առաջին տարիներին Աշխ. Քալանթարի հուշարձանապահպան գործունեության հիմնական ուղղություններն ու արդյունքները; Հիմնավորվում է, որ հուշարձանների պահպանության խնդիրը խորհրդային իշխանության տարիներին կարևորվել է և պատահական չէր, որ Խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ օրերից իշխանությունները ծավալեցին հուշարձանապահպան ակտիվ գործունեություն: Աշխ. Քալանթարը որպես այդ գործի լավագույն գիտակ, կրկին ընդգրկվում է հնությունների պահպանության նորաստեղծ կոմիտեի կազմում, որպես գիտնական քարտուղար: Հարկ է նշել նաև, որ նախկին կոմիտեի շատ անդամներ, այդ թվում՝ Մարտիրոս Սարյանը, Թորոս Թորամանյանը, Ալեքսանդր Թամանյանը ևս շարունակեցին իրենց աշխատանքը հնությունների պահպանության կոմիտեում:

Հնությունների պահպանության կոմիտեն Խորհրդային Հայաստանի կառավարության առջև հարց է բարձրացնում «աստ և անդ ցրված հնությունների և գեղարվեստական իրերի հավաքման ու պետական թանգարանում տեղավորելու շտապողական հարցով»: Աշխ. Քալանթարին մտահոգող հարցերից մեկն իրեն այդքան հարազատ դարձած Անիի հնությունների պահպանության խնդիրն էր: Չնայած ստեղծված ծանր իրավիճակին, Աշխ. Քալանթարը յուր

գաղափարակիցների հետ փորձում էր կործանումից փրկել նշանավոր հնավայրը: Ինչևէ, քաղաքական աննպաստ գործընթացների արդյունքում Հայաստան աշխարհը զրկվեց «քաղաքային աշխարհիկ և եկեղեցական ճարտարապետության կազմավորման ու զարգացման կարևորագույն օրրան» դարավոր Անի հնավայրից:

Աշխ. Քալանթարը որպես հնությունների պահպանության կոմիտեի գիտնական քարտուղար, փաստացի գլխավորում էր Հայաստանում կատարվող հնագիտական - հուշարձանապահպան աշխատանքները: Հատկապես ծանր ու դժվար էին գործունեության առաջին տարիները. առաջնահերթ և հրատապ լուծում էին պահանջում հնությունների ու հուշարձանների պահպանության հետ կապված խնդիրները: Եվ, ընդհանրապես, արխիվային վավերագրերի ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ առաջին հայացքից աննշան թվացող գործն անգամ ժամանակի առումով դարձել էր օրախնդիր: Ասենք, օրինակ, նոր կազմակերպված պետական թանգարանի համար հարկավոր էր ձեռք բերել կաղապարներ: Բացի նրանից, որ վերջինիս հայթայթումը կապված էր ֆինանսական լուրջ միջոցների հետ, սակայն ձեռք բերման համաձայնությունը պետք է տար հնությունների կոմիտեն: Հնությունների պահպանության կոմիտեի ջանքերով լուծվեց նաև Երևանի պետական համալսարանի հնագիտական «կաբինետը» անհրաժեշտ սարքավորումներով համալրելու հարցը:

Իհարկե, Խորհրդային իշխանության առաջին տարիներին հնությունների և հուշարձանների պահպանության ուղղությամբ կարևոր և հրատապ լուծում պահանջող աշխատանքները շատ էին և դրանք հնարավորության սահմաններում իրականացվում էին: Աշխատանքների ընթացքը սակայն հետագայում ցույց տվեց, որ առանձին հարցեր լուծելու համար կոմիտեին տրված լիազորությունները բավարար չէին, ուստի անհրաժեշտություն առաջացավ հատուկ դեկրետով սահմանել հնությունների և հուշարձանների պահպանության կոմիտեի իրավունքներն ու պարտականությունները, այլ խոսքով՝ օրենքի ուժ տալ այդ ամենին: Հաշվի առնելով հարցի հրատապությունը՝ 1923 թ. դեկտեմբերի 18-ին ՀՍԽՀ Ժողկոմխորհի նիստում լսվում է հուշարձանների պահպանության մասին դեկրետի նախագծի հարցը: Որոշումն էլ ձևակերպված էր բավականին հակիրճ և ըմբռնելի՝ «Ընդունել և հրատարակել»: Նիստից շատ չանցած, հրապարակվում է Ժողկոմխորհի դեկրետը, որի ստեղծմանը կոմիտեի մյուս անդամների հետ իր անմիջական, իսկ որպես գիտնական քարտուղար՝ կարևոր մասնակցությունն է ունեցել Աշխ. Քալանթարը:

Դեկրետին հետևում է Լուսժողկոմի հ. 107 հրամանը՝ Հնությունների պահպանության կոմիտեի կազմը նշանակելու մասին, որը հրապարակվում է 1923 թ. դեկտեմբերի 30-ին: Հրամանի համաձայն Ալեքսանդր Թամանյանը նշանակվում է Հնությունների պահպանության կոմիտեի նախագահ, իսկ 1924 թ. ապրիլի 4-ին, Աշխարհբեկ Լոռի Մելիք-Քալանթարը՝ կոմիտեի գիտնական

քարտուղար: Շուտով հաստատվում է նաև Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի կանոնադրությունը:

Առաջնահերթ գործերից մեկը, որին ձեռնամուխ եղավ նորաստեղծ կոմիտեն, հնագիտական արժեք ներկայացնող հնությունների իրական պահպանությունն ապահովելն էր: Այդ նպատակով և աշխատանքներին ծրագրված բնույթ հաղորդելու համար, Կոմիտեն կազմակերպում է մի շարք արշավախմբեր Հայաստանի տարբեր շրջաններում: Կազմակերպված անհետաձգելի աշխատանքների արդյունքում հնարավոր դարձավ հաշվառման ենթարկել և ավարտել Խորհրդային Հայաստանի հարյուրավոր հուշարձանների նկարագրությունը, չափագրել և կազմել դրանց հատակագծերը, լուսանկարել ընդհանուր տեսքը և անհրաժեշտ այլ նկարագրիչները (մոտ 500 լուսանկար)**:**

Անշուշտ, հնավայրերի պահպանության համար այդ տարիները բավականին անհարմար ժամանակներ էին: Այդուհանդերձ, հնությունների կոմիտեի և անձամբ նրա գիտնական քարտուղար Աշխ. Քալանթարի հետևողական և համառ աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ հուշարձանները հեռու պահել «սոցշինարարության» բացասական դրսևորումներից: Որպես կանոն, հնությունների կոմիտեն գիտակցելով գործի կարևորությունը, հնարավորինս աշխատում էր արագ արձագանքել տեղերից եկող խնդրանքներին: Եվ եթե հնարավոր չէր լինում անմիջապես մեկնել շրջան, համապատասխան գրություն էր ուղարկվում տեղական մարմիններին՝ մինչև կոմիտեի ներկայացուցչի ժամանումը՝ դադարեցնել հնավայրի քանդման աշխատանքները: Այդ աշխատանքները համակարգում էր գիտնական քարտուղար Աշխ. Քալանթարը, թեպետ գրություններում, որպես կանոն, դրվում էր նաև կոմիտեի նախագահ Ալեքսանդր Թամանյանի ստորագրությունը:

Ամփոփելով նկատենք, որ ստեղծված իրավիճակում կոմիտեի և անձամբ Աշխ. Քալանթարի կողմից ձեռնարկած աշխատանքները մեկ անգամ ևս հաստատում են, թե որքան հիմնավոր են եղել Հայաստանի հնավայրերի վերաբերյալ նրա գիտելիքները: Աշխ. Քալանթարի 1921-1924 թթ. ծավալած գործունեությունը կազմակերպչականից զատ հստակ ծրագրային բնույթ ուներ: Նա մանրամասն տեղյակ էր հանրապետության անխտիր բոլոր հնավայրերում՝ ներկայում և նախկինում կատարված աշխատանքների մասին: Աշխ. Քալանթարի հետևողական ու ջանադիր աշխատանքի շնորհիվ կործանումից փրկվեցին մշակութային արժեք ներկայացնող տասնյակ հնավայրեր:

2.2 Աշխ. Քալանթարի ավանդը «Զվարթնոց» պատմահնագիտական վայրի կայացման գործում: Արխիվային և պատմագիտական գրականության քննության հենքի վրա ցույց է տրվում Աշխ. Քալանթարի վաստակը «Զվարթնոց» պատմահնագիտական վայրի պահպանության և կայացման գործում: Հիմնավորվում է, որ խորհրդային իշխանության հաստատումից հետո, «Զվարթնոց» պատմահնագիտական վայրի կայացման հիմնական ծանրությունն ու պատասխանատվությունն ընկած էր Հայաստանի հնությունների

պահպանության կոմիտեի, իսկ առավելապես գիտնական քարտուղար Աշխ. Քալանթարի վրա: Նա էր աշխատանքների հիմնական կազմակերպիչը:

«Զվարթնոց» հնագիտական վայրի պահպանության առաջնահերթ խնդիրը նրա իրական վիճակի որոշակիացումն էր. 1922 թ. մարտի 7-ի նիստում կոմիտեն քննարկելով այս հարցը, որոշում է կազմել մի հանձնաժողով, որը գլխավորում է Աշխարհբեկ Քալանթարը»: Հաջորդ կարևոր գործը, որը նույնպես հրատապ լուծում էր պահանջում, դա «Զվարթնոց» հնավայրի սահմանների հստակեցման հարցն էր. կրկին Աշխ. Քալանթարի ջանքերով 1923 թ. հոկտեմբերին ստեղծվում է ևս մեկ հանձնաժողով: Ընդսմին հանձնաժողովի նպատակը ոչ միայն հնագիտական վայրի սահմանազատումն էր, այլև խնդիր էր դրվում «Զվարթնոց» հնագիտական արգելոցը վեր ածել պատմամշակութային կենտրոնի:

Աշխ. Քալանթարի անմիջական հանձնարարությամբ, նշանավոր ճարտարապետ Թորոս Թորամանյանի գլխավորած խումբը ձեռնամուխ է լինում Զվարթնոցի հնագիտական արժեք ներկայացնող վայրերի և գույքի ցուցակագրությանը: Բավականին պատասխանատու և կարևորություն ներկայացնող մի աշխատանք, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ինչպես առաջին հանրապետության տարիներին, այնպես էլ Խորհրդային իշխանության հաստատումից ի վեր, այդպիսի աշխատանք Զվարթնոցում չէր տարվել: Եվ, ընդհանրապես, արխիվային վավերագրերի ուսումնասիրությունը մեզ բերում է այն համոզման, որ Թորոս Թորամանյանի նման գիտակ մարդու ընտրությունն այս գործի համար, պատահական չի եղել: Ի դեմս Թորոս Թորամանյանի, Աշխ. Քալանթարը տեսնում էր հզոր և իր գործին նվիրված հուշարձանապահպանի:

Աստիճանաբար աշխատանքներն ընկնում են հունի մեջ, որի արդյունքում հնարավոր դարձավ ոչ միայն պահպանել Զվարթնոցն իր հարակից տարածքներով, այլև ամուր հիմք ստեղծվեց նրա հետագա գիտական ուսումնասիրությունների համար: Աշխ. Քալանթարի և իր նման նվիրյալների գործունեության արդյունքում է, որ «Զվարթնոց» հնագիտական համալիրը ներկայումս դարձել է Հայաստանի հանրապետության պատմամշակութային ժառանգության իրական և արժեքավոր կոթողներից մեկը՝ իր մեջ խորհրդանշելով հայոց պատմության, մշակույթի և ճարտարապետության անցյալն ու ներկան:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԱՇԽԱՐՀԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՊԱՀՊԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1925 - 1936 ԹԹ.

3.1 Աշխ. Քալանթարի գործունեությունը «սոցշինարարության» տարիներին (1925-1929 թթ): Ենթագլխում հիմնավորվում է, որ Խորհրդային պետության կայունացման և տնտեսության վերականգնման հետ միասին, Հայաստանում նոր թափ են ստանում Հնությունների պահպանության կոմիտեի

աշխատանքները: Այդ տեսակետից, 1925 թ. և հետագա տարիները կարելի է համարել Հայաստանում Հնությունների պահպանության վերելքի ժամանակաշրջան՝ նկատի ունենալով թե՛ կատարվող աշխատանքների ծավալը և թե՛ տարածքային ընդգրկումը: Խորհրդային Հայաստանի տարածքում սփռված նյութական մշակույթի բազմահազար մնացորդների պահպանության և դրանց համապարփակ ուսումնասիրության գործն ամբողջությամբ դրված էր Հնությունների պահպանության կոմիտեի վրա: Վերջինս, որպես գիտական հաստատություն, շարունակում էր գործել Հայաստանի Լուսժողկոմատին կից: Եվ, իհարկե, կատարվող աշխատանքների կազմակերպման կենտրոնում կոմիտեի անխոնջ մշակ և առաջամարտիկ Աշխ. Քալանթարն էր և աշխատակազմը՝ Ալեքսանդր Թամանյանի գլխավորությամբ:

Հարկ է նշել, որ Ալեքսանդր Թամանյանի և Աշխարհբեկ Քալանթարի հարաբերությունները բավականին ջերմ են եղել, ինչն էլ պայմանավորել է համատեղ երկարատև և արդյունավետ աշխատանքը հնությունների պահպանության կոմիտեում: Ուստի պատահական չէր, որ Ալեքսանդր Թամանյանի մասին ծավալուն հոդվածի հեղինակը «Խորհրդային Հայաստան» թերթում Աշխ. Քալանթարն էր:

Այդ տարիներին Հնությունների պահպանության կոմիտեի մշտատև ուշադրության կենտրոնում է եղել հուշարձաններով հարուստ այնպիսի մի տարածաշրջան, ինչպիսին Սևանա լճի ավազանն էր: Աշխ. Քալանթարի անմիջական նախաձեռնությամբ կազմակերպեցին մի շարք արշավախմբեր, որոնց նպատակը Սևանի լճի ավազանի հնագիտական արժեք ներկայացնող հուշարձանների ուսումնասիրությունն էր: Ասվածի ակնառու վկայությունը Աշխ. Քալանթարի կողմից Աղմաղանի հնագիտական վայրի ուսումնասիրությունն էր: Աշխ. Քալանթարի հոգատարության շնորհիվ հնարավոր եղավ պահպանել Աղցքի հնավայրը. այն, որ Աղցքը ներկայումս շարունակում է հանդիսանալ Հայաստանի հնությունների պահպանության կարևոր օղակ, դրանում մեծ ավանդ ունի Աշխ. Քալանթարը: Այդ տարիներին Աշխ. Քալանթարի անմիջական ջանքերով սկսվում է Դվին հնագիտական վայրի պեղումները:

Ենթագլխում ծավալուն անդրադարձ կա հնությունների պահպանության խնդրում առաջացած դժվարությունների և խոչընդոտների մասին: Ինչպես ամբողջ Խորհրդային երկրում, այնպես էլ Հայաստանում լայնորեն ծավալված «սոցիալիստական» շինարարությունը մեծ վնաս պատճառեց ճարտարապետական և հնագիտական հուշարձաններին: Ուստի պատահական չէ, որ հնությունների պահպանության կոմիտեի գործունեությանը վերաբերող արխիվային գործերում այս թեման հաճախ է շոշափվում: Իսկ իրավիճակն իսկապես տագնապալի էր և անդառնալի հետևանքների կարող էր հանգեցնել: Սակայն ի պատիվ Հնությունների պահպանության կոմիտեի աշխատակազմի, տեղերում կոմիտեի ներկայացուցիչների և առաջին հերթին Աշխ. Քալանթարի գործադրած ամենօրյա եռանդուն ջանքերի գնով հնարավոր դարձավ մեղմել հուշարձանների ոչնչացման գործընթացը: Ասվածին հավելենք, որ չկար

հնագիտական կամ հնավայրերի պահպանությանը վերաբերող մի ձեռնարկում, որի կազմակերպչական հիմքն ու գործընթացը սկիզբ չստանար Աշխ. Քալանթարի կողմից. յուրաքանչյուր այդպիսի փաստաթղթում կարելի էր հանդիպել Աշխ. Քալանթար անվանը. այսպես՝ 1924-1927 թթ. ընթացքում կոմիտեի կողմից կատարված աշխատանքների հաշվետվության մեջ իրականացված 99 աշխատանքների մեջ Աշխ. Քալանթարի անունը հիշատակվում է 68 անգամ:

Այսպիսին էին Հայաստանի հնությունների պահպանության գործում 1926-1929 թթ. Աշխ. Քալանթարի ծավալած գործունեության հիմնական արդյունքները: Կատարված աշխատանքը մեկ անգամ ևս հաստատում է Աշխ. Քալանթարի նվիրվածությունը հնությունների պահպանության գործին: Անվիճելի է նաև նրա ներդրումը Հայաստանի շատ հնավայրերի պահպանության գործում. լիներ դա նշանավոր Հաղպատի կամ Տաթևի վանքերը, թե դամբարանից հանված հնագիտական նյութ, որի պահպանությանն այդքան կարևոր նշանակություն էր տալիս մեծանուն գիտնականը:

3.2 Պայքար պատմամշակութային հուշարձանների պահպանության համար (1930-1936 թթ.): 1930-ական թվականները քաղաքական, տնտեսական և մշակութային տեսակետից հարուստ ժամանակաշրջան էր Խորհրդային պետության պատմության մեջ: Խորհրդային Միությունում ողջ թափով ընթանում էին առաջին հնգամյա պլանի կատարման աշխատանքները: Սոցիալիստական շինարարությունն աննախընթաց վերելք էր ապրում նաև Խորհրդային Հայաստանում: Բնականաբար, այդ ամենը դրական և բացասական հետևանքներ էր թողնում մշակութային կյանքի վրա: Դրականն այն էր, որ գնալով ավելանում էին ժողովրդական կրթությանը և մշակույթի զարգացմանը հատկացվող միջոցները, տարեց տարի ամրանում էր տեխնիկական բազան: Մյուս կողմից, սակայն, «սոցիալիստական շինարարության» ծավալումը նոր խնդիրներ էր առաջացնում հանրապետությունում մշակութային արժեք ներկայացնող հնավայրերի և ճարտարապետական կառույցների համար: Այդ տեսակետից, Հնությունների պահպանության կոմիտեի աշխատանքները ոչ միայն չպակասեցին, այլև ամենօրյա հետևողական աշխատանքի նոր ճակատ էր բացվում: Ասվածի հաստատումն են այդ ժամանակաշրջանին վերաբերող արխիվային վավերագրերը, որոնց բովանդակությունն առանձին բացառություններով, գրեթե նույնն էր. նոր շինարարության թույլտվություն ստանալու համար տեղական մարմինների հայտնած դժգոհությունը, Հնությունների պահպանության կոմիտե հասնող նույն բողոքներն ու ահազանգերը:

30-ական թվականները Խորհրդային Միության և Հայաստանի Հանրապետության համար նաև հակակրոնական տարիներ էին: Հոգևոր հաստատությունների հանդեպ անհանդուրժողականությունը աննախադեպ ծավալներ էին ընդունել. եկեղեցիները քանդվում կամ վեր էին ածվում կոլտնտեսային պահեստի, խոտի ամբարի և այսպես շարունակ: Կրոնամշակութային

այդ շինությունները Խորհրդային ագիտպրոպագանդայի համար դարձել էին յուրատեսակ թիրախ՝ աթեիստական գաղափարների տարածման համար: Ուստի Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի գործունեության համար այդ ժամանակաշրջանն ամենից դժվարին տարիներն էին:

Սակայն նույնիսկ այս դժնդակ տարիներին Հնությունների պահպանության կոմիտեն անում էր հնարավորը՝ գաղափարական այս մեքենային հակազդել սեփական քարոզչությամբ, փորձում էր բացատրական աշխատանք տանել լայն հասարակայնության մեջ»:

Վերլուծելով Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի և նրա գիտնական քարտուղար Աշխ. Քալանթարի 30-ական թվականներին ծավալած գործունեությունը՝ հստակ կարելի է ընդգծել, որ իրավիճակից դուրս գալու կոմիտեի որդեգրած քաղաքականությունը և Աշխ. Քալանթարի ձեռնարկած քայլերն այդ ուղղությամբ լիովին արդարացված ու հիմնավորված էին: Արվել է այն հնարավորը, ինչ թույլ էր տալիս տեղավորվել ժամանակի «գաղափարական հրամայականների» տրամաբանության շրջանակում: Այս առումով բացառություն չեն Երևանի միջնադարյան հուշարձաններից Սբ. Պողոս-Պետրոս և Սբ. Աստվածածին-Կաթողիկե եկեղեցիները, կոթողներ, որոնք ունեցան հար և նման, այնքան էլ տարբեր ճակատագրեր: Ենթագլխում ծավալուն անդրադարձ է կատարվում Երևանի Պողոս-Պետրոս եկեղեցու քանդման դեմ Աշխ. Քալանթարի հիրավի աննախադեպ դիմակայությանը:

Իր ողջ գործունեության ընթացքում Աշխ. Քալանթարի կողմից ներկայացված դիտարկումները, լինեին դրանք իշխանության բարձրագույն օղակներին, թե տեղական՝ քաղաքային կամ գյուղական խորհուրդներին ուղարկած սովորական գրություններ կամ զեկուցագրեր, ամենուրեք նա հիմնվել է գիտական վերջին տվյալների վրա: Ասվածի ակնառու ապացույցը նույն Պողոս-Պետրոս եկեղեցու մասին Աշխ. Քալանթարի կողմից կազմած զեկուցագիրն է:

Հայաստանի ազգային արխիվում Աշխ. Քալանթարի գործունեության վերջին շրջանի մասին պատմող փաստաթղթերից մեկը ռուսերեն է և վերնագրված է «Բնութագիր՝ տրված Աշխ. Քալանթարին ՀՍԽՀ լուսավորության ժողկոմ Արտո Եղիազարյանի կողմից»: Թվագրված է 11 հունվարի 1936 թ.: Տրված իրական բնութագիրը, սակայն չփրկեց Աշխ. Քալանթարին քաղաքական հետապնդումներից. ձերբակալությունների ալիքը հասավ նաև մեծանուն գիտնականին: 1938 թ. մարտի 2-ին հակախորհրդային գործունեություն ծավալելու կեղծ մեղադրանքով Աշխ. Քալանթարը ձերբակալվում է: Աշխ. Քալանթարը սկզբից դատապարտվում է գնդակահարության, այնուհետև 1941 թ. սեպտեմբերին մահապատիժը փոխարինվում է ութ տարվա ազատազրկմամբ՝ ուղղիչ աշխատանքային ճամբարում: 1942 թ. հուլիսի 2-ին Չելյաբինսկ տանող ճանապարհին մեծանուն հայագետը կնքում է իր մահկանացուն: 1955 թ. ապրիլի 2-ին Խորհրդային Միության գերագույն դատարանի վճռով Աշխ. Քալանթարը հետմահու արդարացվում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների:

1. Դեռևս Սանկտ Պետերբուրգում ուսանելու տարիներին Աշխ. Քալանթարը Նիկողայոս Մառի երաշխավորությամբ ներգրավվեց Անիի պեղումների արշավախմբում: Հարկ է նշել, որ հռչակավոր այս երկու գիտնականների համագործակցությունը բավականին արդյունավետ եղավ ոչ միայն հայրենի գիտության զարգացման տեսակետից, այլև հենց իր՝ Աշխ. Քալանթարի՝ որպես գիտնականի կայացման առումով: Այդ ժամանակաշրջանում Աշխ. Քալանթարի հնագիտական գործունեության կարևոր կենտրոններ դարձան Վանստանը (Իմիրզեկ) և Շիրակավանը: 1917 թ. Աշխ. Քալանթարը մասնակցեց Վանի հնագիտական երկրորդ արշավախմբի աշխատանքներին:

2. Աշխ. Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունն իրապես սկսում է Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին՝ 1918-1920 թթ.: 1919 թ. հուլիսի 1-ին կազմավորվում է Հանրային կրթության և արվեստի նախարարությունը, որի կառուցվածքում ստեղծվում է հնությունների պահպանության բաժինը. վարիչ է նշանակվում Աշխարհբեկ Քալանթարը: Այդ ծանր ժամանակներում Աշխ. Քալանթարի և հնագիտական գործի մյուս նվիրյալների ջանքերի շնորհիվ 1918 թ. ապրիլին, թուրքական ներխուժման նախօրեին հնարավոր եղավ ոչնչացումից փրկել Անիի ընդարձակ հնադարանը և ի պահ տալ Սանահինի վանքում:

3. Խորհրդային իշխանության առաջին տարիներին վերակազմակերպված Հնությունների պահպանության կոմիտեի և նրա գիտնական քարտուղար Աշխ. Քալանթարի ձեռնարկած աշխատանքների արդյունքում հնարավոր եղավ պահպանել ճարտարապետական և հնագիտական արժեք ներկայացնող բազում հուշարձաններ ու հնավայրեր:

4. Դյուրին չի ընթացել հնավայրերի պահպանության կազմակերպումը, հատկապես, երբ նկատի ենք ունենում մի կողմից սոցիալիստական շինարարության անհետաձգելի աշխատանքները, մյուս կողմից, երկրի սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը:

Ամփոփելով այդ շրջանի Աշխ. Քալանթարի հուշարձանապահպան գործունեության արդյունքները՝ հարկ է փաստել, որ նրա համար այդպես էլ խորթ մնացին Խորհրդային ժամանակների ամեն հինը ոչնչացնելու բոլշևիկյան գործելաոճը: Իսկ այդպիսի դիրքորոշումը բավականին դժվար էր պահպանել այն ժամանակվա պայմաններում: Արխիվային վավերագրերը հաստատում են, որ Աշխ. Քալանթարը մշտապես հավատարիմ է մնացել իր դավանած սկզբունքներին, թեպետ կյանքի վերջին շրջանում այն ճակատագրական հետևանք ունեցավ:

5. Աշխ. Քալանթարն իր գործունեության ընթացքում սկզբունքայնություն և հետևողականություն դրսևորեց Հայաստանի նշանավոր հնավայրերի պահպանության խնդրում: Ստեղծված պայմաններում, երբ գաղափարական մեծ ճնշում էր գործադրվում Խորհրդային մարմինների կողմից՝ քաջ գիտակցելով,

որ եկեղեցական բոլոր կառույցները հնարավոր չէ պահպանել, իր բարձր հեղինակությունն ու դիրքը ի նպաստ դրեց, որպեսզի քանդման ցուցակներում չհայտնվեն մեծարժեք ճարտարապետական կառույցները: Այս տեսակետից, անվիճելի են Աշխ. Քալանթարի ծավալած գործունեության արդյունքները 1925- 936 թթ.: Այդ տարիները Հայաստանում հնությունների պահպանության վերելքի ժամանակաշրջան էր՝ նկատի ունենալով թե՛ կատարվող աշխատանքների ծավալը և թե՛ տարածքային ընդգրկումը:

6. Աշխ. Քալանթարն իր ողջ գործունեության ընթացքում տարբերություն չէր դնում, խոշոր է հնավայրը, թե փոքր, արժեքավոր է, թե ոչ. նրա համար բոլորն էլ արժեքավոր էին ու պահպանության ենթակա: Ընդսմին Աշխ. Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը միայն Խորհրդային Հայաստանի տարածքով չի սահմանափակվել: Նույն հոգատարությունը նա դրսևորել է Արցախի և Նախիջևանի պատմահնագիտական վայրերի պահպանության հանդեպ: Եվ, իհարկե, գիտական սխրանք պիտի համարել Աշխ. Քալանթարի քայլը՝ 1925 թ. Անիի հնավայր այցելությունը:

7. Աշխ. Քալանթարի ծավալած հուշարձանապահպան գործունեության կարևոր արդյունք պետք է համարել «Զվարթնոց» պատմահնագիտական վայրի պահպանությունը, ամուր հիմքեր ստեղծվեցին նրա հետագա գիտական ուսումնասիրության և զարգացման համար:

8. Վերլուծելով Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի և նրա գիտնական քարտուղար Աշխ. Քալանթարի 30-ական թվականներին ծավալած գործունեությունը, հստակ կարելի է փաստել, որ ստեղծված իրավիճակից դուրս գալու կոմիտեի որդեգրած քաղաքականությունը և Աշխ. Քալանթարի ձեռնարկած քայլերն այդ ուղղությամբ լիովին արդարացված ու հիմնավորված էին: Արվել է այն հնարավորը, ինչը տեղավորվում էր ժամանակի «գաղափարական հրամայականների» տրամաբանության շրջանակում. կազմակերպված տարատեսակ արշավախմբերի գործունեության արդյունքում հայտնաբերվել է մեծաքանակ հնագիտական նյութ, բացվել են բազում ճարտարապետական և պատմահնագիտական հուշարձաններ:

9. Իր ողջ գործունեության ընթացքում Աշխ. Քալանթարի կողմից ներկայացված զեկուցագրերը, լինեին դրանք ուղղված իշխանության բարձրագույն օղակներին, թե քաղաքային կամ գյուղական խորհուրդներին, գրվել են գիտական վերջին տվյալների վրա, հնավայրի մասին մանրամասն բացատրություններով ու հիմնավորումներով; Այսպիսին է եղել Աշխ. Քալանթարի գործելաոճը՝ գրել հիմնավոր և պատճառաբանված:

10. Աշխ. Քալանթարի ողջ կյանքը նվիրաբերվեց հայկական պատմամշակութային արժեքների պահպանությանն ու ուսումնասիրությանը, պայքարեց, որ մշակութային այդ արժեքները անաղարտ մնան, պատգամեց ու ապագա սերունդներին փոխանցեց մշակութային հսկայական ժառանգություն: Եվ, վերջապես, իր կարճատև կյանքի ընթացքում Աշխ. Քալանթարը հասցրեց կատարել մի քանի մարդկային կյանքին հավասար գործ. հիրավի հերոսության հավասար կյանք ու գործունեություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՅՈԼՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Աշխարհբեկ Քալանթարի ավանդը Զվարթնոց պատմահնագիտական վայրի կայացման գործում, «Էջմիածին», 2017, Զ, էջ 133-150:
2. Աշխարհբեկ Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը, «Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին» (խմբ.՝ Ա. Բոբոխյան և այլք), Երևան, ՀԱԻ հրատ., 2019, էջ 482-495:
3. Աշխարհբեկ Քալանթարի անտիպ նամակները Նիկողայոս Մառին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2020, թ. 1, էջ 398-413:
4. Աշխարհբեկ Քալանթար. Մի դիմակայության պատմություն, «Էջմիածին», Ա, 2022, էջ 118-137:
5. Աշխարհբեկ Քալանթարի գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2023, թ. 1, էջ 281-291:
6. Աշխարհբեկ Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը (1930-ական թթ.), «Պատմաբանասիրական հանդես», 2023, թ. 1, էջ 183-195:

БАЙРАМЯН КАРЕН САМВЕЛОВИЧ

ПАМЯТНИКООХРАННАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АШХАРБЕКА КАЛАНТАРА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук
по специальности 07.00.03 «Археология»
Защита состоится 11 июня 2024 г. в 14:00 ч., на заседании специализированного совета 007 по археологии и этнографии КВОН, действущего при Институте археологии и этнографии НАН РА
(адрес: 0025, г. Ереван, ул. Чаренца 15)

Резюме

Диссертационная работа посвящена освещению памятникоохранной деятельности известного ученого, арменоведа Ашхарбека Калантара. Еще будучи студентом в Петербурге, Ашхарбек Калантар по ходатайству Николая Марра участвовал в научных экспедициях (Ванстан, Лори, Ани, Ширакаван, Ван).
Памятникоохранная деятельность Ашхарбека Калантара в действительности начинается в годы Первой Республики Армения (1918-1920 гг). 1 июля 1919 года образуется Министерство народного образования и искусств, в структуре которого создается комитет по древностям. Ашхарбека Калантара назначают заведующим. В те тяжелые времена благодаря усилиям Ашхарбека Калантара и других подвижников археологического дела удалось спасти от уничтожения около 6000 археологических предметов крупного музея-памятника Ани и многие другие важные памятники.

Ашхарбек Калантар был одним из профессоров-основателей ЕГУ и сыграл важную роль в сфере образования и подготовки профессиональных кадров. Позже студенты Ашхарбека Калантара продолжили дело своего профессора.

Организовать сохранение древних памятников даже в годы Советской власти было непросто. Используя свои тесные связи с научными учреждениями, Ашхарбек Калантар посвятил широкую научную общественность в дела по охране древностей, проводимые в Армении, участвовал в конференциях различных научных сообществ, выступал с научными докладами. Эти годы были периодом подъема интереса к охране древностей в Армении, что проявилось как в объеме производимых работ, так и в территориальном охвате. Было сделано все возможное, что соответствовало логике «идеологических императивов» того времени. В результате деятельности различных экспедиций было обнаружено большое количество археологического и историко-археологического материала, открыто множество историко-археологических памятников (храмы Звартноц, Сурб Рипсиме, монастырь Татев, бассейн озера Севан, Ардви и другие древние памятники).

Подводя итоги памятникоохранной деятельности Ашхарбека Калантара, следует отметить, что еще с советских времен большевистская тяга к уничтожению всего старого ему была чужда, а поддерживать такую позицию в условиях того времени было довольно сложно. Архивные документы подтверждают, что Ашхарбек Калантар остался верен исповедуемым принципам, хотя это и имело фатальные последствия в последний период его жизни.

Вся жизнь Ашкарбека Калантара была посвящена защите и изучению армянских исторических и культурных ценностей. Он боролся за то, чтобы они остались нетронутыми, заповедовал и передал огромное культурное наследие будущим поколениям.

BAYRAMYAN KAREN SAMVEL

THE MONUMENT PROTECTION ACTIVITIES OF ASHKHARBEK KALANTAR

Dissertation for the degree of Doctor of History
on the specialization of “Archaeology” 07.00.03
The defense of the dissertation will be held on June 11, 2024, at 14:00 at the session of the Specialized Council 007 on Archaeology and Ethnography of HESC by the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of RA (address: 0025 Yerevan, 15 Charents st.)

Summary

The dissertation work is dedicated to the coverage of the monument protection activities of the famous scientist, Armenologist Ashkharbek Kalantar. Even in his student years in Petersburg, Ashkarbek Kalantar was involved in scientific expeditions (Vanstan, Lori, Ani, Shirakavan, Van) on request of Nikolai Marr.

The monument conservation activities of Ashkharbek Kalantar actually began during the years of the First Republic of Armenia (1918-1920). On July 1, 1919, the Ministry of

Public Education and the Arts was formed, within which a committee on antiquities was created. Ashkharbek Kalantar was appointed as the head. In those difficult times, thanks to the efforts of Ashkharbek Kalantar and other archaeological devotees, it was possible to save about 6,000 archaeological objects of the large museum-monument Ani and many other important monuments from destruction. Ashkharbek Kalantar was one of the founding professors of Yerevan State University and played an important role in the field of education and training of professional personnel. Later, students of Ashkharbek Kalantar continued the work of their professor.

Organizing the preservation of ancient monuments even during the years of Soviet power was not easy. Using his close connections with scientific institutions, Ashkharbek Kalantar introduced the protection of antiquities carried out in Armenia to the wide scientific community, participated in conferences of various scientific communities, and presented scientific reports. These years were a period of increased interest towards the protection of antiquities in Armenia, which was manifested both in the terms of work performed and in the territorial coverage. Everything possible was done that was consistent with the logic of the "ideological imperatives" of that period. As a result of the activities of various expeditions, a large amount of archaeological and historical-archaeological material was discovered, many historical and archaeological sites were opened (temples of Zvartnots, Surb Hripsime, Tatev Monastery, Lake Sevan basin, Ardvi and other ancient monuments).

Summing up the monument conservation activities of Ashkharbek Kalantar, it should be noted that since Soviet times, the Bolshevik policy of destruction of everything old was alien to him, and it was quite difficult to maintain such a position in the conditions of those times. Archival documents confirm that Ashkharbek Kalantar remained faithful to the principles he professed, although this led to fatal consequences in the last period of his life.

The entire life of Ashkarbek Kalantar was devoted to the protection and study of Armenian historical and cultural values. He fought to ensure that they remained intact, bequeathed and passed on a huge cultural heritage to future generations.